ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 60) 700 305, ֆաքս՝ (+374 60) 700 050
Վեբկայք՝ www.minfin.am

_____№_____

**<<Հետաքննող լրագրողներ>>**

**ՀԿ նախագահ պրն. Էդիկ Բաղդասարյանին**

Հարգելի պարոն Բաղդասարյան,

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Ձեր ս.թ. մայիսի 5-ի հարցման (առցանց համար՝ FA6A-8F86-CC50)՝ մեր իրավասությունների շրջանակում հայտնում ենք հետևյալը.

<<Four Assist Development Consulting Limited>> կազմակերպության հետ **13/06/2012թ.** կնքված պայմանագրի գումարը կազմել է ***625,853.33 ԱՄՆ*** դոլար, այդ թվում՝

***469,390.0 ԱՄՆ դոլար*** նախատեսվել է խորհրդատուին՝ <<Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման համար>> IDF TF 096227 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում;

***52,154.44 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ*** նախատեսվել է շահութահարկ և ***104,308.89 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ*** ԱԱՀ՝ ՀՀ պետական բյուջեից որպես համաֆինանսավորում:

Հիմք ընդունելով <<Շահութահարկի մասին>> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածում կատարված փոփոխությունը, որը ուժի մեջ է մտել 2013թ. հունվարի 1-ից, 08/05/2013թ. պայմանագրում կատարվել է փոփոխություն, ըստ որի պայմանագրի գինը կազմել է ***704,085.0 ԱՄՆ դոլար***, այդ թվում՝

***469,390.0 ԱՄՆ դոլար*** նախատեսվել է խորհրդատուին՝ <<Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման համար>> IDF TF 096227 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում;

***117,347.5 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ*** նախատեսվել է շահութահարկ և ***117,347.5 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ*** ԱԱՀ՝ ՀՀ պետական բյուջեից որպես համաֆինանսավորում:

Արդյունքում՝ <<Four Assist Development Consulting Limited>> ընկերությանը վճարվել է 469,390.0 ԱՄՆ դոլար, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան հաշվարկվել և վճարվել են ՀՀ պետական բյուջե 96,877,070.0 ՀՀ դրամի հարկեր:

«Four Assist Development Consulting Limited» կազմակերպության հետ կնքված պայմանագրով նախատեսվել է.

- «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում;
- Հաշվային պլանից նոր հաշվային պլանին անցման վերաբերյալ ձեռնարկի մշակում;
- Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի և դրա կիրառման հրահանգի մշակում;
- Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների մշակում;
- Հանրային հատվածի կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության մոդելի մշակում;
- Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ուղեցույցի մշակում;
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի և հաշվային պլանի ներդրման պիլոտավորման աշխատանքներ;
- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի, պիլոտավորվող կազմակերպությունների ու ճյուղային նախարարությունների մասնագետների վերապատրաստում:

<<Four Assist Development Consulting Limited>> ընկերության և ՀՀ-ում գրանցված <<Փի-Էյջ-Փի Փարթնրզ>> ընկերությունների միջև կնքված ենթակապալի պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարությունը չի տեսել, առավել ևս պարտավոր չէր տեսնել և գնահատել ենթակապալառու կազմակերպությանը, այլ ՀՀ ֆինանսների նախարարությունը գնահատել և հաղթող է ճանաչել <<Four Assist Development Consulting Limited>> ընկերությանը: Նշվածով պայմանավորված՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը <<Four Assist Development Consulting Limited>> և <<Փի-Էյջ-Փի Փարթնրզ>> ընկերությունների միջև կնքված ենթակապալի պայմանագրում նշված ենթակապալին հատկացվող գումարի չափի վերաբերյալ տեղեկատվություն չունի:

**Հարգանքով՝**

**Կարեն Թամազյան**